

# ԱԿՈՒՄՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՂՐՍՈՂ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ՓԱԹԵՔ

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի /այսուհետ՝ Օրենք/ հոդված 1-ի 1-ին մասում «և կենցաղային» բառերը փոխարինել «, կենցաղային և ակումբային» բառերով:

**Հոդված 2.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 5.2-րդ և 5.3-րդ հոդվածներով.

**«Հոդված 5.2. Բնակչությանը նվազագույն առևտրի օբյեկտների, հանրային սննդի, ակումբային և կենցաղային ծառայությունների մակերեսներով ապահովվածության չափորոշիչները և դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները**

1. Հայաստանի Հանրապետության բնակավայրերում առևտրի օբյեկտների, հանրային սննդի, ակումբային և կենցաղային ծառայությունների բնակչության ապահովվածության նորմանսահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
2. Հայաստանի Հանրապետության բնակավայրերում առևտրի օբյեկտների, հանրային սննդի, ակումբային և կենցաղային ծառայությունների տեղակայումը (վերակառուցումը) թույլատրվում է բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ համայնքների գլխավոր հատակագծերին և քաղաքաշինական գոտիավորման նախագծերին համապատասխան:
3. Հիմք ընդունելով սույն հոդվածի 1-ին մասի պահանջները առևտրի օբյեկտների, հանրային սննդի, ակումբային և կենցաղային ծառայությունների տեղակայման (վերակառուցման) թույլատրվությունը բնակավայրում տալիս է համայնքի ղեկավարը, Երևանում՝ քաղաքապետը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն հոդվածի պահանջները չեն տարածվում բնակավայրերից դուրս համայնքի վարչական տարածքում տեղակայվող (վերակառուցվող) առևտրի օբյեկտների, հանրային սննդի, ակումբային և կենցաղային ծառայությունների վրա:»: